

11949

291.99

Z-26

L  
C

№ 340. x. op. 1.

105.

Ա. Հ Օ Յ Ա Խ Ե Ւ Բ .

N169 6  
Մ.

# ՀԱԻԺՈՒԹԻԿ

Յ

Ս Ա Մ Ե Լ Հ Ա Վ Ի Կ .

Բիւրակն լեռներուն վերայ հայ հովիսն ու  
հովուուն.

(Արտատապած Արարատ ամսագրեց :



1895

Ի ՏՊՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒԴԻԿԵ ՀԱՅՈՒԱԾՆԻ.

891.99

Հ-25

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ա

№ 340 ս. գ. մ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎԻԿ

Բ'կ

Ս Ա Մ Ե Լ Հ Ա Վ Ի Կ .

1010  
40757



(Արտադրություն «Արտաքարտ» ամսագրից):

— Տ է Շ Շ Տ ՝ —

1895

ի ՏՊՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

500

2801

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հութութիկը պատմած է Զարսանճագ  
գալատից համայիլ զիւղացի Մինաս բաքարը,  
որ վերի վերոյ զի առած եմ։ Այս գրուած-  
քը այլ բազմաթիւ գրուածոց հետ երեք տա-  
րի չըստարակչական Ընկերութեան մօտ ա-  
նուշադիր մնալով հազի հազ ձեռք ձգած եմ։

Ի սրտէ շնորհակալութիւնս կը յացնեմ՝  
առ Մեծապատիւ Պարոն Ն. Քարամեան,  
որ սոյն գրուածիս կարեւորութիւնը մանաշե-  
լով յանձնեց ի տպագրութիւնն Արարատի մէջ,  
իւմ յառաջաբանով հանդերձ ուստի արտա-  
տպելով կը յանձնեմ հայ հասարակութեան։

ՀՐԱՄԱՆԱՀ  
Տ. Տ. ՄԿՐՏՉԻԿ Ա.  
ՎԵՀՈՓԱՌ ԵՒ ՍՐԲՈԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՊԵԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱԽ ՈՒԹԻՒՆ.

Ամանոնաւոր զարգացումն ունեցող զրաւանութիւնները անունդ են սահնում ժողովրդական զրականութիւնից: Այս այսօրուան նոր զրականութիւնը գեռ չէ սկսել իւր կանոնաւոր զարգացման լնթացքը, նու էլ մեր Հին զրականութեան պէս մի մուրացածոյ և հետեւող զրականութիւն է և ոչ ինքնուրոյն: Արա պատճառն է անշուշտ մեր ժողովրդական զրականութեան աչքաթող արուած լինելը: Այն աշխարհարար զրականութիւնը հարիւրամեայ կամ աւելի մի շրջան է բոլորել արդէն, քառորդ դար չէ լրացրել գեռ այնօրուանից, երբ սկսել ենք ծանօթանալ մեր հարուստ ժողովրդական զրականութեան:

Այս անփութութեան վնասներն արդէն կրում ենք, այսօր ամուլ է մեր նոր զրականութիւնը, հետեւող լինելու ոյժ չունենալով և մայրենի աղբիւրից ջուր առնել կարող չը լի-

նելով, ցամաքել է մեր զուտ զրականութիւնը:

Միայն այսքան չէ մեր վնասը, այլ աւելի մեծ է, չը ճանաչելով մեր ժողովրդական զրականութիւնը, չենք ճանաչում և մեր ժողովուրդը ու չենք կարողանում օտարներին ճիշդ ճանաչեցնել: Այնչ հայն այսօր զուտ երկրագործ ժողովուրդ է, ամէնքը գոչում են, որ նա վաշխառու է, ով զիատ հայի գութանի երգերը, ով զիատ հայ հովուի կեանքը:

Հայ հովուական կեանքի մի գեղեցիկ նկարագիրն է «ութութիւն» ու Ասմել հովիկն», որ տպագրում ենք ահա «Արարա»ի այս համարում: Ի՞նչ պարզ և գեղեցիկ հովուերգութիւն: Ի՞նչպէս գեղեցիկ և ժողովրդական է հովուի, հայ լեռնական հովուի կեանքը:

Ի՞նկեօլի հրաշալիքը, լեռնային տեսարանի, բուսական աշխարհի և երդի ու սրնդի ձայների հրապոյրն ինչքան հոմերական պարզութեամբ է նկարագրուած: Հապա ի՞նչ ասենք սիրոյ տոչորման նկարագրի մասին, սէ-

րըն, այդ երկնային կրակի կայծը, որ վառ-  
ուումէ մարդուս սրտում; Ի՞նչքան վեհ, ի՞նչ-  
քան բուռն և ի՞նչպէս յաղթահարիչ է:  
Հութութիկի միսյ տափնապը, նրա յաղ-  
թած արգելքների մեծութիւնը համոզում է;  
Այդ թէ ի՞նչքան գնահատում է հայը այդ  
երկնային պարգելը: Թռող կարդան այս պարզ  
վէպիկն այն մարդիկ, որ հայի մէջ միայն նիւ-  
թականի սէրն են գտնում:

Այս գեղեցիկ ժողովրդական վէպիկը  
պատմելէ Խարբերդի կողմից Խոմայէլ դիւղից  
դաղթած Մինաս բարարը:

Այս ամառ երբ հետաքրքրութեամբ ու-  
սումնասիրումէի պ. Ա. Հայկունու զրակա-  
նական ժողովածուն, խոկոյն աչքիս ընկաւ այս  
վէպիկն իւր նորաձևութեամբ: Այդ մասին մի  
հարեանցի տեղեկութիւն տուի «Արձագանք»  
թերթին: «Արձագանքի» այդ յօդուածը շար-  
ժել է մի հայ զրասէրի հետաքրքրութիւն և նա  
նպաստ էր ուղարկել թէ պ. Հայկունի շա

լաղբութիւնների տպագրութեան և թէ Մի-  
նաս բարարի համար: Երբ այդ առատաձեռն  
հայի նուերը տալու համար ութսունամեայ  
Մինաս բարարին կանչեցի, պէտք էր տես-  
նել նրա զարմանքը: Խեղճ հայ, նա վարժ-  
ուել էր արգեն, որ արհամարհանքով վերա-  
բերուեն գէպի հայ սառը, չայի լեզուն, երզը.  
— Այժմ ամէնքը թուրքերէն խաղ կը կանչեն,  
հայի բառ չեն ուզէր, իմ աղայութեանս ժա-  
մանակ ուրիշ էր, հայերէն կը պատմէին, հա-  
յերէն կերգէին ... երբ ես հայերէն կը պատ-  
մէի չէին լսեր, շատ բան մոռցեր եմ այժմ...  
Հառաչաձայն ընդհատմամբ գանգատուումէր  
Մինաս բարար: (Օգուտ քաղելով առթից  
պատմել տուի կրկին «Հութութիկը և մի քա-  
նի նորութիւններ լսելուց յետոյ, ինդրեցի  
պ. Հայկունուն կրկին զրի առնել, որ և կա-  
տարելով այդ խնդիրն, ահա տպագրումէ այն  
ձեռվ, ինչ ձեռվ լսել է Մինաս բարարից: Կար-

դացողները կր նկատեն անշուշտ թերի մասեւ  
րը բայց դարձեալ ընդհանուր առմասի սա  
մի ամբողջութիւն է, որ յանձնարարում ենք  
հայ գրագետներին, թերես կարելի լինի մի  
առելի լաւ վարիանտ գտնել:

Ա էպիս լեզուն ևս աղաւաղ է, որովհե-  
տեւ պատմօղն երկար օտարութեան մէջ մը-  
նալով՝ խառնել է իւր լեզուն:

Այսպիսի վեպիկների լեզուն ]թէպէտ և  
տաղաչափական է լինում սովորաբար, ինչպէս  
օրինակ բոլոր քրդական վեպերի լեզուն է.  
բայց մեր պատմողն հազիւ միայն տեղ տեղ  
ճիշդ լեզուն և չափը պահած լինի, պ. Հայ-  
կունին կարճ տողերով է գրի առել, հետեւ-  
լով պատմողի ընդհատումներին:

Ե. Ք.



Հ Ո Խ Թ Ո Խ Թ Ի Կ

Ե Կ

Ս Ա Մ Է Լ Հ Ո Վ Ի Կ

Ա.

Մալաթիա ծերունի մարդ մը կըլի,  
Էաս մարդը շատ աղքատ, տուշկուն կըլի,  
Իրեք հատ աղջիկ կունենայ,  
Մէ հատ էալ թօփալ օխչար (այծ) կունենայ:  
Աղքատը կերթը փէտա կը բերէր,  
Քաղաք տանէր կը ճախէր,  
Հաց կը գնէր, տուն կը տանէր,  
Աղջիներուն կուտեցնէր,  
—Արդի, ըսըց մէկ օր,  
Դուք իրեք հատ աղջիկ կը,  
Մէկ թօփալ օխչար ունիք,  
Կըլէրին (այլոց) սիւրիւն լեառը կարծուի,  
Զեր էաս թօփալ օխչարը ախոռէն չէլլր:  
Երկու մեծ աղջիկնը պապերնուն լսին,

Բարար, մենք գերտ չունինք,  
Քու թօփալ օչխա՞ըլ տի տանինք, արծինք,  
Մենք ալ ըսինք թէ՝  
Զըհար բարարը մեզի ճիղմէ բան տի բերէ,  
Մարդը մէկ օր էալ օրթանձա աղջկան ըսըց,  
Էան էալ էան լմանը ըսըց.  
Մէկալ օրը չարէն կըյրաւ,  
Պղտիկ աղջկան ըսաւ,  
Աղջիկս, քիղի բան տի ըսիմ:  
Էսէ, բարար (հայր),  
Որդի, տի ըսիմ:  
Քըրւլտոցդ պէս ալիքս անրդես վախիմ:  
— 2է, բարար, ես պղտիկ իմ:  
Քըրւլտոց պէս չիմ:  
Ինչ օր ըսիս, քիղի մտիկ կինիմ:  
Էսիս ջուրը ընկիր, կէրթը կըյնիմ:  
— Որդի, օր թէ քըրւլտոցդ պէս չիս,  
Օր իմ խօսքին մտիկ կինիս,  
Թօփալ օխչարը կը տանիս կարծիս,  
Բարար, կէրթը ինծի մէ ջուխթ չարոխ  
կառնիս,  
Քօլօղ մի, կաղնի լաւ գէյնէկ մի կըրերիս,  
Վըու մի լաւ քէչէ կը դտնես.

Մի շատ լաւ խաւալ (սրինդ) կառնես:  
Բարարը էլաւ գնըց,  
Զարոխը, քոլօղը, գէյնէկը բերըց,  
Քէչէն էալ գտաւ, առաւ բերաւ:  
Աղջիկ չարոխը հագաւ,  
Քօլողը գլոխը զարկաւ,  
Քէչէն էալ վրան առաւ:  
Գէյնէկն էալ ձեառքը առաւ:  
Բարարն էալ օխչարը հանեց,  
Աղջկան առջին խառնեց,  
— Տէ, աղջիկս, ըսըց, գնա,  
Օխչարը լաւ արծա:  
Զիմ տանիր, բարար, ըսըց աղջիկը,  
— Խնչու չես տանիր,  
2է, խոստացար տանիս,  
Ես քիղի չըսի «ալիքս տի անրդես»:  
— Քէղի ըսի «խաւալ մի բեր»:  
Պապը օլրտաւ (պտտեց). խաւալ մի գտաւ,  
Առաւ բերաւ, աղջկանը տուաւ:  
Աղջիկ ջանթան լեցոց աղը.  
Կռնակը կապեց հացը.  
Խաւալը առաւ, Ճամփայ ընկաւ:  
Պղտիկ զաղար մի ունէր, անունը Մըճան էր.

Աեղուն կը հասկընար, առաւ հետք:  
 Ըսլց—բարար, մնըս բարի:  
 —Աստուած բանի յաջողէ, էրթըս բարի,  
 Աղջիկը մի սահամուան տեղ տարաւ,  
 Օխչարը փախաւ էկաւ,  
 Իրեք անգամ տարաւ,  
 Իրեք անգամ էալ փախաւ էկաւ,  
 Աղջիկը աճըղաւ,  
 —Գլխուս բէալա փէյտայեցի, ըսաւ:  
 Յետի սողը գընըց, մեշի ծառը կապեց.  
 —Աղը օ բերի, ի՞նչ բանի համար է, ըսլց.  
 Խաւալը ջուրը թաթխեց, աղը վրան ցանեց,  
 Օխչարին բերանը տուեց:  
 Օխչարը աղը կըլզէր, յետին կը վազէր,  
 Արծելէն լզելէն մի աւուր ձանփայ գընըց:  
 Կնքը խաւալը փչելէն կը գընըր,  
 Օխչարը ետևուն արծելէն կէրթըր:  
 Աղջիկը տունը տեղը մառըցաւ,  
 Գնըց մենծ լեառան տակ հասաւ.  
 Իրիկուն էղաւ մթնեցաւ, աղջիկը քնացաւ.  
 Օխչարը գետինը փորեց, քովը պարկեցաւ:  
 Աղջիկը տահա քնուկ էր,  
 Օխչարն էալ նստաւ կորձայ:

Գէալը խոշոր խոտ բերանը առեր էր  
 Գետինը սիւրիւլմիշ ըլլելէն կուգար,  
 Օխչարը օտօք զարկեց աղջկան,  
 Աղջիկ արթըցաւ, օտաց վրայ կայնաւ,  
 Գէալը փախաւ:  
 Առաւատնը աղջիկը էլաւ, օխչըին աղ տուաւ,  
 Լեառան մատնիվեր տնկուաւ,  
 Կէսը օ էլաւ՝ պաղ ջուրը տեսաւ,  
 Ջուրը թեթև ու բարակ էր,  
 Վըլացուաւ, օխչարը ջրեց ու նստաւ,  
 Հացը կերաւ, էլաւ կայնաւ,  
 Լեառան արևցաթին թարաֆը հայեաւ,  
 Շատ սիւրիւ, մագի (ոչխար) տեսաւ կարծուին,  
 Գուգան գէպի իզին (իւր կողմն):  
 Խաւալը առաւ բերանը փչեց.  
 Անցոց մտոցը՝  
 Շատ չէ էն մագիստանուց գայ տասը,  
 Ինձի բոլ է:  
 Բաշլայեց ինձէ փերտէէն (կակուղ եղանակաւ) փչեց:  
 Մագիստանը գետնէն գլխինին վերուցին,  
 Գէպի արևպատքը (արևմուտք) հայան.

իրարու ետև շարուան.  
 Հինգ հարիր մազի սարերէն թափուան.  
 Աըյրուեցան, աղջկան քով էկան.  
 Բոլորը առին, կայնան:  
 Աղբին բոլորը քարէ սալ էր.  
 Աղջիկը աղը սալին վրայ կը ցանէր.  
 Մէկ թարափէն խաւալը կը փչէր,  
 Մազիստանը աղի ջրի կը կանչէր.  
 Մազիստանը թափուան, աղը լզեցին:  
 Մէկ թարափէն ջուրը խմեցին:  
 Աղջիկը կենէ խաւալը բերանը դրաւ,  
 Խնձէ փէրտէէն փչիկը առաւ.  
 Լեռան եաննիվեր օլրուաւ:  
 Մազիստանը իրարու էտև շարուան,  
 Աղջկան էտևը ընկան:  
 Աղջիկը անցաւ Մուրատ գետին կեչուտը.  
 Էլաւ հետիու լեռառը:  
 Հոն աղբիր մի կար, վրան նստաւ,  
 Մի քիչ հանդչեցաւ:  
 Ընդըռւն սիւրիւ մի տեսաւ,  
 Օ արեցըթուն արեպատը էկաւ.  
 Քիչ քիչ աղջկան մօտեցաւ:  
 Խաւալը կենէ բերանը դրեց. բարսէն ժիր փչեց.

Էան մազիստան գլխնին վէրուցին հայան,  
 Պոռալէն վրան էկան:  
 Որը իրուր էտև շարուան էկան, խառուան,  
 Որն էալ խրկացին, փախան:  
 Աղջիկը խաւալը առաւ,  
 —«Սգայ (այստեղից) էալ կորինք» ըսաւ,  
 Էլաւ ճանիայ ընկաւ,  
 Էրկու օր՝ էրկու գիշեր օ ընցաւ,  
 Հարօղլու լեռառը հասաւ,  
 Ըգկայ էալ էլաւ,  
 Մաստարու լեռառն էալ ընցաւ,  
 Եօթն օր՝ եօթն գիշեր օր ընցաւ.  
 Բինկէօլու լերան գլուխ հասաւ.  
 Մուրատի ջրի ակին վրայ նստաւ.  
 Հաց կերտաւ, ջուր խմեց, հօն կեցաւ.  
 Խաւալը կը փչէր.  
 Կէլլըր նրձէզ ծաղիկ կը ժողվէր,  
 Քոլողին բոլորը կը շարէր:  
 Մի ամիս ժամանակ օ կեցաւ,  
 Իրան պապական օխչարը քոստաւ,  
 Մազերը թափեցաւ.  
 Ըռութ կաշին էրկեցաւ.  
 Ըսց—մորթիմ, միսը չուտուիր,

Հեր ուր օր կերթը քովուս չի կյլրիր.  
Ելլմ լոքցընիմ,  
Տոմուրձուք ըլլի վախիմ:  
Բերըց ձգեց աղբրին ակը.  
Լոքուց՝ զարկեց սիւրիւին մէջը:  
Սիւրիւն ամեկ տեղ մի ճաղպուան  
Խնըն էալ աղբրին ակը կը հայէր.  
Խաւալը բերնին դրէր, կը փշէր:  
Մաղիստանը աղջկան կը հայէրն  
Բոյորուն գէն չէին էրթը:  
Քսանը չորս սահաթ ուրուշ միտք էրըց,  
Խաւալը չիչեց,  
Մաղիստանը զատուան, հեռցան:  
Դաւարը միտքը ընկաւ,  
Խաւալը կինէ բերնին դրաւ ու փչեց,  
Դաւարը գլխուն վրայ թոփեց (հաւաքեց)  
Հաեւաւ թոփալ օխչարը միչուանը չէր,  
Հեռցաւ, խաւալի միջուն կը կանչէր:  
— «Կէյիկ, կէյիկ, կէյիկ,  
Վեր տեղ ես նը էկոյ:  
Կէյիկ, կէյիկ, կէյիկ,  
Վեր տեղ ես նը էկոյ:  
Օխչարը վաղեց էկաւ աղջկայ քով կայնաւ,

Էկաւ օ մի տարուայ ուլ՝ մաղերը փոխմուն՝  
Սև էր, կարմրեր մաղերը էկեր է,  
Լեառան օխչար գարձէր է՝  
Ամեն գիու աղջիրը (եղջիւր) քշէր է՝  
Թիք (ուղղահայեաց) էալ էլեր է.  
Դարձէր ծոռուեր՝ յետին օլրուեր է :  
Վրու աղջիրը ընկնելու վրայ է.  
Աղջիկը մտածելու մէջ մնցա,  
— Էաս իմը չըլլիր, ըսրց,  
Էլաւ աղջրիրնուն քերթերը (յօդերը) համրեց,  
— Էաս իմ օխչարը կըլլի ըսրց,  
Աղբրին մէջ լոքցաւ, սաղցաւ:  
Էրկու օր էտե աղջիկը գժար հիւնդցաւ,  
Վրան եարա թափեցաւ, պառկաւ,  
Էլաւ գնց էան աղբիրը լոքցաւ.  
Եարան սրպ սաղ էղաւ,  
Էլաւ օտաց վրայ կայնաւ՝  
Ըսրց—լս էրկու օրը չիք փշէր:  
Ճաշուայ շոգուն խաւալը առաւ բերանը փչեց.  
Սիւրիւն օ լսեց խաւալին ձէանը՝ թօփուան,

1. Այծի եղջիւրներն եղնիկի եղջիւրներու նման ետեւ  
կեռած էին:

Մաղիստանը սև էին, լոքոցնը փոխուան +  
Քութին էալ ձերմըկան,  
—Բայ լաւ եղաւ, ըսըց, տիրանը չեն ձանչնար,  
Իմ մինէ առնէր էրթը:



Բ.

Աղջիկ հայեաւ գիմացուն՝  
Սիւրիւ մի գեպ իղինք էկաւ,  
Սիւրիւն տէրն էալ ետևանց էկաւ  
Աղջիկն օ տեսաւ դիլուն խելքն զնըց.  
Ըսըց իրան իրան, — «ըս ինչ բան է,  
Լաթերուն օ կը հայիս, տղայ է.  
Էրեսին կը հայիս, աղջիկ է:  
— Բարե քեզ, ըսըց, հովիկ.  
— Աստուծոյ բարին, չոպան,  
Աղըար, վեր տեղաց էս, ըսըց տղան.  
— Ես էալ չիմ գիտէր, ըսըց աղջիկը.  
— Անունդ ինչ է, ըսըց տղան.  
— Սամէլ հովիկ է, ըսըց աղջիկը:

1. Միշեւ էն վախտը մարդ չէր գիտէր թը վեր  
մնի է դրախտէն էլած ջրի ակը, Սամէլ հովիկն օ լոքուց,  
նոր իմաց էղան:

— Քու անունդ ինչ է, ըսըց Սամէլ հովիկ.  
— Հութութիկ Մութութիկ է.  
Ես Հութութիկ մարդու մինէ խէր չեմ տեսեր,  
— Սամէլ հովիկ, ըսըց տղան, քեզի վեցիկին  
տուեց օ առեր էաս լեառը բերիր,  
— Հութութիկ Մութութիկ, լեառան էալ դո-  
րու կինես.  
— Կենիմ զորու, հըպի:  
— Բանի՞ հազար օխչար ունիս օ զորու կենիս,  
Թողլիմն էալ՝ քումն էալ արծին:  
— Հինդ հազար սիւրիւ ունիմ:  
Տղէն քովէն հայեաւ, տեսաւ Սամէլ հովիկը,  
Միաբը փոխեց, ըսըց—տեսնըմ էաս աղջիկ  
տի ըլլի  
Զեառքը նետեց շնկն, օ բռնէր էրեսը պագնէր,  
Մրձան ընկաւ սիւրիւն մէջ.  
— Հութութիկ, սիւրիւդ սիւրիւյիս իսու-  
նուաւ:  
Գնացին հեմ ըստին՝ հեմ ընդին ընկան,  
Զատել չկրցան.  
Սամէլ հովիկ ուզէր, իսաւալով կը զատէր,  
Գնըց կիսուն կիսուց, առաւ մէ եան տարաւ,  
Տղան փոշովնաւ, — Սամէլ հովիկ, ըսըց,  
Թողլ գան, մէկ տեղ մնան, մէկ տեղ կարծինք.

— Թու լեառը ղորու կինես,  
Մէկ տեղ արծինք կըսես.  
Ես չիմ խառնէր, քու հետ արծէր:  
— Ես եարանկութին (կատակ) էրի:  
Կը խնդրուիմ քինէ, արի՝ մէկ տեղ արծինք,  
Իրարու հետ հաց ուտինք:  
Սիւրիւս տանը սէապեցին. իրարու խառնեցին.  
Ճաշուայ շոգուն սիւրիւն եաթաղը տարին.  
Իրանք էալ աղբերին վրայ նստան, հաց կերան:  
Ըսլը Հութութիկ Մութութիկ.  
— Գուն հոս կեցիր, Սամէլ հովիկ.  
Մէր տուն մօտ է,  
Լուսուն միզի հաց պէտք է.  
Հութութիկը պղտի էշ մ'ունէր,  
Խուրձինը նետեց վրան դընըց տունը,  
— Ավա (մայր) ըսլը, հաց դիր կոյնոցին մէջ  
օր առնեմ էրթամ:  
— Գուն հէչ գալած չունէիր,  
Ի՞նդուր էղաւ օր սիւրիւն սէապեցիր,  
Ամեն օր ես կը բերէի հացը.  
Հութութիկ, վեւ կայ սիւրիւն քովը:  
— Ավա, ընկեր մի գտայ տասուերիու տարուայ  
աղիկ տղայ մի է.  
Կանուր սիւրիւն շատ է քան իղիմը.

Խառներիք իրուր օր էտև օրթըլսէն տի կիսիք.  
Մէարը տապակ մի հաւկիթ էփեց.  
Վրան մերզ ցանեց, խուրձինը դրեց.  
Հութութիկ առաւ գնըց,  
Սամէլ հովիկան հետ կերան:  
Օր մի էրկօր ընցաւ, իրուր հետ սերպաստ  
էղան,  
Նստան պաշլայեցին լախրտու,  
Իրարու վրայ տաքցան.  
Սիւրուն մովնուն գընըց,  
Հութութիկ Սամէլ հովիկան ըսլը.  
— Էադ ի՞նչ ծակ փէատ է,  
Եախագ իվէար զարկմուն է:  
Խսիմ, մէջը ծակ փէատ մընէ:  
Աղբրին մինէ գաւարը էրկու սահալ հեռը  
ցան  
Սամէլ հովիկ ըսլը — էրթք աղբրին վրան.  
Հութութիկ ըսլը — գաւարը տարտղնան,  
Էրթք աղբրին վրայ ի՞նչ էնիք, էլլք թոփիք:  
Հութութիկ գընըց օ թոփէր,  
Սամէլ հովիկ գընըց աղբրին վրան,  
Խաւալլ ջուրը թաղթեց,  
Բերնին գրեց, փչեց՝

Մաղիստանը խաւալի ձէանը լոեցին,  
Թօփուան գլխուն վրան.  
Էկաւ ձորի միջուն արծողը, աղբրէն շատ հե-  
ռու ԸԼՐՊՀ. ।

Փշի մէջուն պլուողը, քարի մէջուն էղողը,  
Քարի ու ծառի շուքը պարկողը:  
Հութութիկ զարմանք մնըց,  
Ես իրեք սահաթուն չեմ կրնը թօփէր ըստւ,  
Էաս ինչպէս էրաւ օր թօփուան, էկան,  
Աղբրի ջուրը խմեցին պարկան:  
Հոսի քառասունը մէկ աղբիր կար  
Ըն մէկն էր օ դրախաէն կելլը.  
Հութութիկը նշան կինէր,  
Առատուն կը տեսնէ նշանը կորեր է:  
Հութութիկ մէկ օր մի քարազուընիկ զուկէց:

4. Աշխարհի վերայ ոչխար չկար, կասէ Մինաս աղ-  
քար, համակի համար ոչխար մի որ կախուեցաւ ծառէն,  
որոյ երկու ոլորուն նղջիւներու մլչ մոտած կար խաւալը  
(սրինգ), համակ առաւ, վշեց, որոյ քաոցը ծայնը դրախտի  
մէջ գտնուած ոչխարներն եթք լսեցին, լացին, որով ոչխար-  
ներն չորս աչք ունէին, եթուուն լալով փմացան եւհետեւելով  
սրինգի ծայնին՝ դրախտէն դուրս ելան, տարածուեցան թին-  
կէօվ լսոներու վերայ, ուստի եւ աշխարհ:

Սամէլ հովիկ ձեռքէն առաւ, գէն զրեց,  
Կրակ վառեց օ տի էփեր.  
Ցախաւելէն մի չպուխ կըլրեց,  
Բերըց օ շիշը զարնէ էփէ,  
Հայեաւ քարաղուընիկը չլուախ կօլրտի  
Գնաց օ բոնէ, թռաւ,  
Լուց հիմայ Հութութիկ կուգայ  
Ես ի՞նգուր աւղըցնեմ,  
Հութութիկ էկաւ քեպապը ուզեց.  
— Զարկած ավրդ վլացի թռաւ, գնըց,  
— Զիմ հաւատար, գու իս կերեր, ըսըց,  
— Ավ (որս) չկա՞յ, սիւրիւյին մէջ լիքէն  
Մէմէալ զարկ, առ ու էկոյ,  
Ամեն օր տէր տէր քաթայ կուտէ:  
— Խչո՞ւ չուտէ, էշը իսառնէ էառջիդ,  
Պոչը բոնէ, կճելով գնաւ, տէյնէկով զարկ:  
Հութութիկ գնըց, մի տէյնէկ նետեց  
Զորս հատ զարկեց,  
Առաւ էկաւ, — առ էփէ, ըստւ,  
Զորսն էալ վլաց, մէկ մէկ նետեց Հութութիկան  
— Ես մէկը կերայ, գու չորսը կեր, ըսըց.  
Վեր մին նետեց, թռան զցին,  
Խաւալը առաւ, լեռան գլոխը էլաւ,

Պաղպաղ հովք էրեսին զարկաւ,  
Անուշ ծաղկըներուն հոտը առաւ:  
Հայեաւ լաւ լաւ ծաղկըներ բացուէր էին,  
Չորս կողմը բանէր էին,  
Մենեմչեն մի թարաւը ծաղկած էր,  
Չոպան գէօշէկին գետինը ընկած էր,  
Մի թարաւը նարվիզ չիչէկին ճերմկած էր,  
Մի թարաւը անուշ նրձէղ կար.  
Հեռուն հազար չեշիս ծաղիկներ կար:  
Էան մէկէալ օր շոքը տահա զօրեց,  
Հութութիկ—տանըք գեղի մօտը աղբիրը,  
լուց:

Առին դցին՝ եաթաղ էրին,  
Շըռի (վայրենի տանձ) ծառին տակ նստան,  
Հութութիկնը լուց աղջկան,  
—Սամել հովիկ, մեր տունն մօտիկ է.  
Էրթըք, հաց ուտիք ու գաք.  
—Մեր խուզիստանը կը գողնան, չիմ գար,  
Դուն զնա, ինչ օ հազր կայ, առ էկոն,  
Հութութիկ տուն դընըց,  
Մէարն լուց.  
—«Բերէիր հետդ Սամել հովիկը, տեսնայաք:  
—Ախ, ախ, ափա, չեկաւ:

—Որդի, ինչու ներսէն «ալս ալս» կինիս:  
—Ավա, Սամել հովիկ աղջիկ է:  
—Զէ, տղաս, աղջիկը հովիկ կըլլի:  
—Ալս, ալս, ափա, Սամել հովիկ իլլէշի քի  
աղջիկ է:  
—Բերէիր, գէմն էլլալուն քիմին կը ճանչնայի:  
—Ավա, շատ աղկէկ է, էնանկ աղկէկ է:  
Օ աշխրքին մէջ չգտնուիր:  
Տղաս, էագոր զոլային գիտեմ,  
Հիմայ փիլաւ մը կեփեմ:  
Փիլաւը էկեց մէարը, լցեց սթըլին մէջ,  
Շերեփի մի մրճան, շերեփի մի ալմաստ լեցոց  
մէջը.  
—Հութութիկ, լուց, կը տանէք նստէք կու-  
տէք.  
Էկը Սամել հովիկ մերձըներ ու ալմաստներ  
ժողուեց, աղջիկ է,  
Զէ օր նետեց, տղայ է.  
Հութութիկ առաւ փիլաւը էկաւ աղբրին վրան,  
նստան Սամել հովկան հետ կերան:  
Սամել հովիկ, գըգալը զարկեց օ բերանը տի  
տանէր,  
Մի զդալին քսան քար կը թափէր,

— Հութութիկ, ըսրց, Սամէլ հովիկ,  
Ինչ փնթի մէար ունիս, օ սալթ քար  
Տահա ինձի չըսիս թէ էրթք տուն,  
Ըսրց զաղարին—էլիր սիւրիւն խառնէ.  
Ամեկ դի մի հանէ:  
Զաղարը վաղեց, սիւրիւն խառնեց,  
Ամեկ դի մի հանեց,  
Աղիկնը ըսաւ,  
— Հութութիկ, գեալը սիւրիւն մէջ ընկաւ.  
Հութութիկ վաղեց.  
Սամէլ հովիկ ալմաստ քարերն ու մերձնները  
ժողուեց,  
Կաքն էալ սրթըլը (փոքր պղնձէ աման) առաւ,  
վաղեց.  
— Էադ ինչ տի ըլլի՝ ի՞նչ է.  
Հութութիկ, գէալ է, գը չէ արջ է:  
— Սամէլ հովիկ, գէալ, արջ ըլլիլը չգիտցայ,  
Նէա փորսուխ, նէա սամնար ըլլիլը գիտցայ,  
Աջիցս մի էրեաց, խայր էղաւ.  
Խոսերուն մէջ կորաւ:  
Տիւրիւն զարկին եայլախնու, բարսը տեղ մի  
նստան,  
Կանաչ կակարչ եայլախին հայեան,

զ.

Օլրուաւ մէկէալ օրը կինէ զօրեց շօքը.  
Էկան աղբրին վրան.  
Զուր խմեցին, հաց կերան պարկան:  
Հութութիկ էլաւ. կերթմ, հաց բերիմ ը-  
սաւ:  
Ըսրց Սամէլ հովիկ,  
— Մէարդ մէթ կինիս (կը գովես), Հութութիկ.  
Էրեկ փիլաւ մ'էր էփեր, պիթուն քար էր.  
Աստուածդ օ կը սիրես.  
Էրեկուան փիլաւէն չքերես.  
Օր տի բերես հեչ մէրթր.  
Հութութիկ տուն էկաւ.  
Մէարը ըսաւ.  
— Հութութիկ, օր ավուր կը յնիս, էադ ի՞նչ է.  
Պէնկդդ կը հայիմ փոխուէր է:  
— ԱՇ, ավա, Սամէլ հովիկ աղջիկ է, օր աղ-  
ջիկ,  
— Հութութիկ, էրեկ էան քարերերը օ ժող-  
ուեր է,

Քու ըսածդ է, Սամել հովիկ աղջիկ է.  
 —Ավա, կը ժողուեր կը նետեր,  
 «Մէարդ փնթի է, կըսէր»:  
 —Հութութիկ, ես ըսո՞ օ տղայ է:  
 —Ան, ավա, Սամել հովիկ աղջիկ է, օ աղջիկ,  
 Ան Սամել հովիկ, ան Սամել հովիկ:  
 Հութութկայ հեարը էրկու խաս պաղչա ուներ.  
 Մէկը տան վեր դին՝ մէկշալը վեար դին էր:  
 Մէկը կիւլի, մէկը ծաղկի պաղչայ էր,  
 Մէջը հոտուն ծաղիկներ լեցուն էր:  
 Մէարը ըսրց—Հութութիկ, տղաս.  
 Էգոր չարան կը դընըմ ես.  
 Գընըց հինդ չէշիթ վարդ բերց.  
 Էրկու թապախի մէջ լեցոց,  
 Վրան էրկու այլև ձգեց ու Հութութիկայ  
 ըսրց.  
 —Հաց նո կերաք՝ մէկը դու վրան կընստիս,  
 .  
 Հութութիկ,  
 Մէկն եալ թող նստի Սամել հովիկ,  
 Օ Սամել հովիկ ըսրց «չիմ նստիր»:  
 Դու ըսա, «մէարս թէնպէ է էրեր»:  
 Մի սահաթ տի նստիք օր թէ,  
 Սամը (խորշակ) չդայ՝ ձեզի զինէ»,

Սահաթ մ'օր թէ նստաք.  
 Էրկուքդ էալ վրուն կելլաք,  
 Սամել հովիկն տկունը թէդ թոռմեր է նը,  
 աղջիկ է,  
 Զէ, էրկուքդ էալ մէկ թոռմեր է, տղայ է:  
 Հութութիկ հացը վարդը առաւ.  
 Գընըց Սամել հովիկայ հասաւ:  
 Հացերնին կերան,  
 Թապախնին շտկեցին, վրան նստան:  
 Աղջիկը իմաց էղաւ օ իր տկունը չորցաւ.  
 Զաղարին լեզուօքը ըսաւ.  
 Զաղարը էան լըմանը ընկաւ սիւրիւկն մէջ,  
 Էան լըման ամէկը մէկ եան տարտղնեց.  
 Ըսրց աղջիկ—գէալը սիւրիւկն մէջն է լնկեր,  
 Հութութիկ, իմ օտքս է թմրէր:  
 Հութութիկը վաղեց,  
 Սամել հովիկ թապախները փոխեց:  
 Հութութիկ իմաց չեղաւ,  
 Թապախնին վրայ էկաւ նստաւ:  
 Սամել հովիկ ըսաւ.  
 —Հութութիկ, ինչ էր դաւարը իւրբմիշ (իւրը-  
 տել) էղաւ:  
 —Գը իսիմ; Սամել հովիկ, ինչ է.

Մէկն օ փանգտայ, իւրքմիշ կըլլին մէկը մէկն  
մինէ,  
— Ճուռս թմրաւ, էլլըք, ըսըց Սամել հովիկ  
Էկը դէրման էր նը է չերիք:  
Հութութիկ հայեաւ, աղջկան տկուն պալարտ է.  
Իրան տկունը չորցեր է.  
Մէկէալ օրը մէարը կինէ տեսաւ.  
Օ Հութութիկ շատ մաշուաւ  
Ըսըց, — Հութութիկ, տղաս  
Էարդ ինչ է օր աւուր վրայ կանցնիս (մաշուիլ).  
— Անս ավա, ես ինչ ըսիմ;  
Սամել հովիկ աղջիկ է օ աղջիկ:  
— Վարդ տարիի նը ի՞նգուր էղաւ:  
— Եմ տկունը չորցեր՝ էանուր տկունը պա-  
լարտ էր,  
— Բօշ տեղը «ախ» մի քաշեր, Հութութիկ,  
Տղայ է Սամել հովիկ.  
— Տղայ չէ, ավա, իլլէ՛հ աղջիկ է,  
Ինգուր էալ աղջեկ աղջիկ է:  
— Տղաս, քիզի բան մէալ ըսիմ,  
Հետդ հաց կը դնիմ;  
Հացը աղբրին վրայ չուտիք,  
Զայի (գետ) վրայ կուտիք.

Կէլլըք խուզիստանը ջուրը կը թափէք,  
Մէկ մէկ կը լոքնէք:  
Տկողնաք ջուրը կը մննաք  
Ամեկը մէկ մէկ կը վըլաք.  
Մէկդ շԱոցը կը բոնէք,  
Մէկդ կը լոքնէք,  
Օ տկողցաւ, ծծերուն, ծամերուն մինէ  
իմաց կլլիս, տղայ է դը չէ աղջիկ է:  
Հութութիկ գնըց, Սամել Հովիկան ըսըց,  
— Մէարս թենագէյ (պատուէր) էրեց,  
« Խուզիստանը կեղտոտ ին, տի լոքնէք »՝ ը-  
սըց,  
Աղջիկը գնըց մազերը քոքուն ըռութ էրեց  
էկաւ,  
Շապիկը վրուն չհանեց, ջուրը մտաւ.  
— Շապիկդ հանէ, Սամել Հովիկ,  
Ըսըց Հութութիկ.  
— Զիմ հանիր, ջուրը պաղ է:  
Խուզիստանը լուացին, էլան  
Հալաւնին հագան:  
Իմաց չեղաւ Հութութիկ,  
Սամել Հովիկ տղայ է թէ աղջիկ,  
Սալտ մարմինը տեսաւ, եղի պէս հալեցաւ.

Մէկէալ օր գնըց տուն նստաւ,  
Ա ի ախ ախ, ախ ախ ախ, էրաւ.  
Մէարն էալ Հութութիւն հալը տեսաւ,  
Նստաւ, լացաւ, ըստաւ, — Տղան, վայ, վայ,  
Վայ  
Լիր մի եղդ հալեցաւ էրեկուայ վրայ:  
Ա ի ավա, գուն իմ տեղը ըլլէիր,  
Օսկորնիդ էալ կը մաշէիր,  
Իմը լիր մէ հալեր, քուկը հինդ լիր կը հա-  
— Տղաս խուզիստանը լոբցուցիք,  
Իմաց չեղած տղայ է դը աղջիկ,  
— Շապիկը չհանեց, ավա,  
Ըսրց « ջուրը պաղ է :  
— Տղաս, քու խօսք է, Սամէլ Հովիկ աղջիկ է,  
Հացը կառնէք կերթաք,  
Ալմա գէրէսին ( ինձորաձոր ) կիջնաք,  
Սիւրիւն կը խառնէք չայիրը,  
Դուք էալ կելլըք ինձորի ծառը,  
Դուն կարմիր ինձորները կը նետիս,  
— « Էաս ինչ փնթի է կըսիս ».  
Կանաչները կը ժողուիս,  
« Ի՞նչ աղջէկ է », կըսիս.

Տես, էան ի՞նչ կինէ, քիղի ի՞նչ դուր կըսէ,  
Ի՞նդուր ինձոր կը ժողուէ, ի՞նդուր կը պէյէ:  
Էան լման ալմա տէրէսին դըցին,  
Դաւարը ձորնը զարկին,  
Իրանք էալ ծառներուն տակ էկան  
Աէնտի կէլէն ( ինքն իրան աճող ) ինձորնուն  
վրան էլան.  
Հութութիւկ կարմիր ինձորնին ժողուեց, նե-  
տեց,  
Տղան աչից տկուն կը հայէր,  
Օ Սամէլ Հովիկ դողտուկ կը ժողուէր,  
Կինէ իմաց չեղաւ, — ըս տե բան մի կայ, ըստաւ.  
— Սամէլ Հովիկ, ըսըց, Հութութիւկ, արի  
համրինք.  
— Հարիր հատ է, ըսըց Սամէլ Հովիկ, ի՞նչ  
համրինք.  
— Արի հայինք, ո՞րին աղկեկ է.  
— Էրկուսն էալ մէկ է, հայէ:  
Հութութիւկ հայեաւ օ կանանչ է,  
Ինչ օ երեսը շարուած է:  
Տակն տի հայէր, Մըձան կիւրիւլթի հանեց,  
Էան լման դաւարը խառնեց.  
Հութութիւկ — սգա էալ բան մի չելաւ ըսըց,

Կինէ մտածոց մէջ մընըց։  
Մէկալ օրը ավլա հացի գնըց,  
Մէարը ավլա Հութութիկայ հարցոց,  
—Իմաց չեղա՞ր, Հութութիկ,  
Աղիկ է թէ տղայ Սամէլ Հովիկ։  
—Ախ, ավա, աղջիկ է օ աղջիկ։  
—Աղիկ է նը ի՞նդուր էրեց,  
Կարմիրնին դը չէ կանանչնին ժողուեց։  
—Ախ, ավա, աղջիկ է օ աղջիկ։  
—Կըսիս աղջիկ է, չըսիս ի՞նդուր էրեց։  
—Ինդուր էրեց,  
Խճի հեջ ցունց չտուեց։  
Էտե հայեցի օ էրեսը կանանչ է։  
—Հութութիկ, էդուց չայլը կերթը,  
Հանուկը կը լգբնաք,  
Օ շապիքը չհանեց, դէն կը քաշես,  
Ծիծերը կը հայիս։  
Հութութիկ հացը տարաւ,  
Կստան, կերան, էլան։  
—Չայլ մտնիք, Սամէլ Հովիկ, լոքնաք, ըսըց  
Հութութիկ։  
—Ես անդա նոր լոքայ, ըսըց Սամէլ Հովիկ։  
Հութութիկ պաշլայեց «ան» քաշելը՝

— Ինչո՞ւ «ախ» կը քաշես, ըսրց Սամել Հովիկ։  
— Բան չկայ, ըսրց Հութութիկ։  
Հութութիկ ավլա տուն գնըց։  
— Ավա, թէղ հաց տուր, ըսրց։  
Մէարը հայեց տղի էրեսին, վախեցաւ,  
— Էսա հէջ հալ չունիս ըսաւ.  
Տղաս, դուն կեցիր տուն, մէրթը մաքիստա-  
նուն։  
Զարա չեղաւ, թէղ առաւ գնըց Հութութիկ։  
Տեսաւ ջուրը մտէր կը լոբնար Սամել Հովիկ։  
Հայը թէղ մի ձեռքէն նետեց,  
Լաթերը հանեց ինքն էալ վազեց.  
Սամել Հովիկ Հութութիկայ տեսաւ,  
— Զաղար, էդի դարերնիս է ըսաւ,  
Քու տուն չքանդուի, Մըճան  
Սիւրուն ամէկ տեղ մի տար,  
Զաղար սիւզիւլմիշ (սլացաւ) էղաւ,  
Դաւարը կիսեց ամէկը մի եան տարաւ.  
Սամել Հովիկ թէղ մի հագաւ,  
Օխչըին մէջ հասաւ,  
— Քու տուն չքանդուի, Հութութիկ, ի՞նչ էս՝  
կեցեր,  
Գէալը օխչալնը է տարեր...

Թէզ հագուշ, էտեսուն վաղէ,  
Հիմայ տանի կուտէ:  
Հութութիկ՝ ան ախը՝ աւելցուց,  
Մտօքը անցոց, «Հըպի ես ինչ էնիմ,  
Սամէլ հովկայ սիրուն տի մեռնիմ»:



Ո.

Եթիշ բարա | մի կար Բինկեօլու էր,  
Տարին էրկու հեղ կուգար մագիստանը կը  
կնտէր,  
Բուրդը տանէր, Նարպէքիր կը ծախէր,  
Փարան բերէր, Հութութիկայ կուտար:  
Հութութիկ եօթը տարի փարան պէյեց,  
Սամէլ հովկայ հիսէն չտուեց.  
Սամէլ հովիկ միտքը ծուեց,  
Հութութիկայ մինչ բաժնուիլ ուզեց:  
Գնա, հաց թէզ առ էկո, ըսց Սամէլ հովիկ,  
Էաս օր պազար է, ես կերթմ պազարը,

Դ. Բինկեօլու անմահական ջուրն խմած էր ու 270  
տարի ապրած էր:

Էաս օր չորեքշարթի է, պազար կայ,  
Էրթըլմ տեսնըլմ պազարին ի՞նչ կայ,  
Սամէլ հովիկ թէզ գնըց պազար,  
Մէկ ջուխթ էրկըթէ չարոխ առաւ,  
Քառսուն խալիս սապոն առաւ,  
Մէկ տէստէ ածըլի առաւ,  
Մի օխա գմնիկի փշի ունդ առաւ,  
Մի բարչ զէթուն եաղի առաւ,  
Էրկու հարիր փալութ առաւ,  
Պազարէն մի մարդ էալ հետը բերաւ,  
Էաս մարդը իրանց էրկրացի էր,  
Էկաւ—բարև քիզի, ըսց Հութութիկ.  
— Աստըծու բարին քիզի Սամէլ հովիկ.  
— Էաս ի՞նչ մարդ է.  
— Պապս Ճանիկեր. սիւրիւին կէսը կուզէ:  
«Մէք ցամաք իք» կըսէ.  
Էկո, Հութութիկ, սիւրուն կիսիք:  
— Զիմ կիսէր ըսց Հութութիկ.  
— Զիս կիսէր նը սիւրիւն թող մնայ, ես կերթմ:  
— Զէ, չէ, Սամէլ հովիկ,  
Եօթ տարի է իրուր հետ կը նստիք կայնիք.  
Սիւրուն քուլին թող տանին,  
Մենք իրուր հետ մընըք:

Սիւրիւին կէսը կիսեց աղջիկը,  
Խառնեց էան մարդու առաջ ձանփեց:  
Իրանք մի ամիս էրկու ամիս մնացին:  
Մի օր՝ Հութութիկ՝ ըսրց—Սամել Հովիկ,  
Եկ՛ էրթըք աղբրին վրայ նստիք:  
Հութութիկ ախ ախ էրաւ, քնաւ.  
Սամել Հովիկ մի սահամ գաւրուն մինէ հեռցաւ,  
Բերնին դրեց խաւալը,  
Պաշլայեց մաքիստանուն կանչիլը.  
Մաքիստանը խաւալին անուշ ձէանը լսեցին,  
Գլխնին գետնէն կը յրեցին,  
Իրարու էտե շարուան  
Պուալէն էկան՝  
Սամել Հովիկ մօտ ժողուան.  
Սամել Հովիկ էաս լեառտանը աղ ու հաց էր  
կերեր,  
Էրթալու էր, էշխով կը փշէր,  
Օ լեառ ու լէանջ ժաժ էր էլեր:  
Քար, ձոր, գէալ, արջ էլած ին,  
Խաւալի ձէանին թամաշա կենին.  
Քարերն կը գլտրտէին,  
Խաւալի ձէանին կուգային.

Պաշլայեց աղջիկը խաւալի ձէանը բարսըցնել.  
Վազուն ջուրը կայնաւ, վէարդին չորցաւ:  
Տղան աղբրին վրայ խաւալին ձէանը կը լսէր,  
Կստած տեղը պաղած մնացեր կուլար.  
Ավլա աղջկան էշխէն պարկաւ,  
Քունը տալմիշ էղաւ:  
Սամել Հովիկ խաւալը զարկեց մէջքը,  
Խուրճինը նետեց փեչը՝ էլաւ բարս սըրթը.  
Հայեց օ տղան թմպրմուն է՝  
Ըսրց—աղ ու հաց իք կերեր ըս եօթ տարի,  
Արթնցնեմ Հութութիկան՝ մեղք է:  
Պաշլայեց խաւալի միջով ձէան տալը՝  
Հութութիկայ կանչիլը.  
—«Սլնը բարի Հութութիկ, ջան Հութութիկ»  
«Սնը բարի Հութութիկ, ջան, Հութութիկ.»  
«Եօթ տարի է իմ աղջիկ ըլլիլը չգիտցար!»  
«Ես քու մինէ ի՞նչ տի հասկնամ!»  
Տղան արթլցաւ հայեաւ,  
Օ աղջիկնը լեառան զլոխ հասաւ.  
—Ափուցս ի՞նդուր տի փրթիս, ըսաւ.  
Էլաւ վաղեց էտեէն՝  
Հա՝ էրաւ օ աղջկան տի համնէր

Առնէր ետ գարձնէր։  
Ըստ Սամել Հովիկ։  
—Իմ մինէ վաղ չգար Հութութիկ։  
Հազիօ լեառը օ էլաւ, աղջիկը հեռցաւ։  
—Մի գար, Հութութիկ, Մութութիկ,  
Լեառան գլխու օխչարը վէար էրէ,  
Միւնքիւն է, տղան տնկուաւ եօխուշը,  
Աղջիկը փախաւ, հազիօ արշուն մի մընց օ  
բռնէ։  
—»Իմ ափուցս ուր տի փախիս,  
Ըսրց Հութութիկ, օ փրթիս։  
Աղջկայ չարան կըյրաւ դժնիի հունդը թափեց՝  
Լեառ ու լեանջ դժնիի փուշ կըյրուուաւ։  
Աղջիկը խէլի հեռցաւ,  
Տղէն էալ փշերու միջուն հա խալըսելու եղաւ,  
Կինէ մօտեցաւ։  
Աղջիկ սապոնը նետեց, լեառու լեանջ սապոն  
կըյրաւ։  
Տղէն հերքի օտքը կը նետեր։  
Զէր կրնը առաջ էրթր։  
Սապոնէն խըլըսաւ, կինէ մօտեցաւ։  
Աղջիկը փալութ ցգեց.  
Գետինը օրման կըյրուաւ։

Տղան օրմանէն իսլըսաւ աղջկան մօտեցաւ։  
Աղջիկ ածիլեստանը թափեց։  
Աշխարք ածիլի կըյրուաւ։  
Տղի օտները կըյրեց։  
Տղան ինչուկ ածիլիստանուն իսլըսաւ։  
Աղջկան մօտեցաւ,  
Աղջիկ պաճը և ձգեց պիթուն աշխար պաճ  
դարձաւ։  
Տղան օ կոմիտեց կսկիծը ձիկերը կը զիներ։  
Աղջիկը իրա հողը Մալաթիա ընկաւ։  
Աղջիկը հայեաւ օ չկրնըր խալըսիլ լեցոց ջուրը,  
Եղաւ Մալաթիոյ մեծ չայը։  
Տղան ընկաւ լողը  
Հազիօր տղան էկաւ ջրին քնարը (եղրը)։  
Աղջիկը մտաւ իրա տունը. տղու աշիցը կորաւ։  
Տղան շուարաւ կայնաւ։  
Զըգիտէր վեր մի թարաւը էրթայ. մի չարայ  
դտնայ։  
Վէար առաւ քոլողը,  
Զեառքը բացեց գէպի էրկինքը,  
— Կը ինդրուիմ, հայր երկնաւոր, ինձիս,  
Միրուն Ճնճուղ մի ինիս։  
— Կարմիր սղպեղ։

Թոնիմ էրթամ: Էնոնց գեօրթին (բակի ծածք) պատին վերայ էջնամ: Աստուած ձեանը լսեց. Ճնճուղ մի էրեց. Թև տուեց, թռաւ գընըց. Էնոնց գեօրթի պատին վրայ էջաւ: Աղջկը գընըց տուն, լաթերը փոխեց, նստաւ. —Քըրուըտիք, ծարաւ էմ ըստ: Էրկու քօրն էալ էլան գցին ջրի, Տեսան գեօրթին պատին վրայ Ճնճուղ մի կայ. Էանանկ աղկեկ Ճնճուղ աշխարքը չըկայ. Կը կարկնէ պիւլպիւլի պէս, Ամեն ըռանկը (գոյն) վրան կայ. Աղջիկներ կեցան թամաշայ: Ճնճուղը պաշլայեց խօսալը, Խօսալ խօսալ թեւերը թափտալը. Մէկ քօրը ջուրը տուեց. —Էաս ջուրը շատ տաք է, ըսըց: —Բին կեօլու պաղ ջուրը սորվերես Էաս ջուրը կը խմես: Մէկեալ քուրն էկաւ, քրոջ ըսաւ. —Դէօրդի պատի վրայ Ճնճուղ մի էկեր է, Էանանկ աղկեկ է, օ, աշխարքի մէջ չկայ: —Դու գցէք տեսէք օչէք տեսեր,

Բինկեօլու վրայ ես շատ եմ տեսեր: Էան գնըց մէկեալ քօրը էկաւ. —Աստուածդ օ կը սիրես, էլի հայէ ինդուր Ճնճուղ է: Սամէլ Հովիկ օ դուս էլաւ՝ Ճնճուղը թռաւ թեւէն բռնեց, Կոնակը նետեց, առաւ գընըց: Քուրուըտանքը էտենուն պոռացին, —Քուրուկ, եօթ տարի ըդ տղի հետ չզրուցիս: Էալ էղաւ, եօթ տարի չզրուցեց: Հովթութկայ մէարը տեսաւ, ըստ: —Ըսի Սամէլ Հովիկ չէ, եաղիշիս բերեր: —Ավա, ըսոր չարան դու տի գտնիս, ըսըց Հովթութիկ: Մէծ զատկին իրեք հաւկիթ էկեց, Կարմիր, գեղին, կանանչ ներկեց, տղոց զրկեց. Տղաք իրուր խառուան, պաշլայեցին կոիւը. Հովթութիկ դռան էտենուն մտիկ կինէր, Տղոց մէարը հերսոտաւ, ըսըց. —Զեր մաման օ լաւ ըլլէր, Մէկ չէշիտ հաւկիթ կը բերէր: Հովթութիկ լսեց, վաղեց, Ըս եօթը տարի է, իմ մուրազը ինչո՞ւ իմ փորը թողիր, Հովիկ,

— Թու քուրուլտոցս եօթ տարուայ մուրազը  
փորը թողիր,  
Կանոր համար պարանպար տի ըլլիր.  
Հէարս մէռեր մէարս պառապ է,  
Քուրուլտանքս անտէր ին,  
Պէյիս նը քեղի հետ կը պսակուիմ:  
Հութութիկ Սամէլ Հովիայ մէարը քուռուլ-  
տունքը առաւ էկաւ,  
Բինկեօլայ + գեղին մէջ կարգեց:  
Կանչեց Արակայ Գրիգոր Նարեկացին,  
Կան Հութութիկն ու Սամէլ Հովիկ առօք  
փառօք պսակեցին:  
Սամէլ Հովիկ մի թոփալ օխչարով Բինկեօլ  
էլաւ,  
Եօթ տարուն եօթ հազար մագու տէր էլաւ:

Ա Ե Ր Զ:



4. Բինկեօլ տուն մի կայ որ Մալաթեցոնց տուն  
կասուի:

ԲԱՑԵՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՌԵԲՈՒՆ.

Սղկէկ - Շատ գեղեցիկ.  
Աղջիր - Եղջիւր.  
Ածղաթ - Զանձրանալ.  
Այլիս - Թաշկիսակ.  
Անցնիւ - Հիւծիւ մաշուիւ.  
Վվա - Մայր.  
Ավդ - Որսու.  
Արեւցաթ - Արեւմուտք.  
Բաբար - Հօր և հօրեղօր կասեն որպէս աքօ եւ  
պիծայ.  
Բաշլայեց - Սկսեց.  
Բէլաւ - Փորձանք.  
Բինկեօլ - Բիւրալն.  
Բօլ - Բաւական եւ առատ.  
Բօշ - Դատարկ.  
Գէալ - Գայլ ամեն առանց յետոյ յ եկող միա-  
վանկը - Գտնեմ.  
Դաւար - Ոչնարաց հօս  
Գէնէկ Բիր, ծեռաց փայտ հովուի եւ մանապարհորդ.  
Գէն Այն կողմէ.  
Գէրման - Դարման.  
Գէրդ - Հոգ  
Խաթախ - Ոչնարի պարկելու, հանգստանալու տեղ.  
Խախա - Օծիք.  
Խայլադ - Սար, հովիտ.  
Խանիվնը - Կողն իվեր.  
Խարա - Աէրք.  
Խարանկութիւն - Կատակ.  
Զաղար - Շան փոքրիկ տնսակը.  
Զարկմուն - Զարկուած. (ուն վերջաւորութիւն ունեցու բառեցն շատ անգամ ած կը վերջանան, երբեմն եւս բացառականի նշանակութիւն ունին).  
Զինէ - Զարնէ.  
Զհար - Մրդեօք.  
Զօրեց - Սաստկանալ, բնանալ.

Եղի դար - Աերջին Ժղնաժամ.  
 Իգին - Իւր կողմ.  
 Իլլափիք - Անրաժեշտ.  
 Ի՞նդուր Որպէս.  
 Խոժէ փերտէլն - Մնդմ եղանակաւ.  
 Խիմ - Ես ի՞չ գիտեմ.  
 Խոքմուշ - Խրոչիւ.  
 Լախոտու - Խօսակցութիւն.  
 Լոքյնել - Լուսա.  
 Խայպ - Կորուստ.  
 Խաս - Շատ լաւ.  
 Խաւակ - Սրինգ.  
 Խուզիստան - Գառներ.  
 Խուրծին - Երկու աչք ունեցող փոքր պարկ շմբոց.  
 Խորկալ - Խրոչիւ.  
 Էսս, էազ, էան - Այս, այդ, այն.  
 Էլլէրին - Այլոց.  
 Էղկայ, ըսգայ - Այդ, այս տեղէ.  
 Ըսլորն, ըսլորն - Այս՝ այն կողմէ.  
 Ըռութ - Մնրկ, անհետ.  
 Ըսլին, ըսլին - Այս այն կողմ.  
 Ըսի, ըսի - Զայս, զայդ, զայն.  
 Մասպակն Սկրտեղ.  
 Թարաւ - Կողմ.  
 Թեղ Շուտ.  
 Թեթեւ Հուր - Փոքր գետ.  
 Թենավեն - Պատուէր.  
 Թիք - Ուղաճայեաց.  
 Թօփալ - Կադ.  
 Թօփեց - Հաւաքեց.  
 Ժիք - Աժխոյժ.  
 Կեշուտ - Անցք.  
 Կծիլ - Կեռիւ.  
 Կոյնոց - Դոգնոց.  
 Հագր - Պատրաստ.  
 Հազկօ - Հազիւ թէ.

Հաւ - Աիծակը.  
 Հայաւ Հայեցաւ, Նայեցաւ.  
 Հեմ Թէ.  
 Հերուր - Ուր եւ.  
 Հըպի - Ապա.  
 Զէան Զայն.  
 Ղօլպին - Գիլբինը  
 Ղօրու - Խրեան յատուկ եղած մարզագետինը կը պահպանէ, որ այլը չարածեցնել.  
 Ճաղպուիլ - Խրարմէ բաժանուիլ, տարածուել.  
 Ճզմա - Կարմիր կօշիկ.  
 Ճուր - Ազդր.  
 Մագի - Ոչխար.  
 Մաղնալ - Մոռանալ.  
 Մատնիվեր - Կող կամ ողն ի վեր.  
 Մէթ - Գովստ.  
 Մէնէմէշ - Մանիշակ  
 Մէշէ - Մստառ.  
 Միջոն Միջէն.  
 Մրժան - Մարգարիտ.  
 Ցեսի սողը - Վերջիվնը.  
 Նէա - Ոչ.  
 Նրմէզ - Նարկիզ.  
 Ծնին - Վիզ.  
 Ծքօքի - Վայրի փշոտ տանձննի.  
 Զայ Գետ.  
 Զայլը - Մարգագետին.  
 Զարէն - Հնարը.  
 Զարուն - Տրեխ.  
 Զէշիթ - Տնասկ.  
 Պալարտ - Դալար.  
 Պաղչա - Պարտէզ.  
 Պաշապեցին - Սկսեցին  
 Պենկզու - Գոյնու  
 Պիթոն - Ամբողջուին  
 Քանթան - Մախաղը  
 Սահաթ - Ժամ.

Սամ — Խորչակ  
Սամսար — Կուզ,  
Սէավեցին — Արձակեցին, Թոյլտուին  
Սերպաստ Եղան — Համարձակուեցան  
Մըպաաղ — Բոլորովին ասող.  
Սըթլ — Փոքրիկ պղծեայ կթոց  
Սիրիւմիշ — Տափել եւ քսուելով գնալ  
Սիրիւլ — Հօտ.  
Վժվ — Ո՞վ.  
Վերդին, վէարդին — Վերի վայրի կողմ.  
Տանա — Այլ եւ.  
Տարտղնան — Բաժանուեցան հնոացան.  
Տի — Պիտի.  
Տկողնալ — Մերկանալ.  
Տուշկուն — Հնկած՝ առքասութեան մէջ կուբուած.  
Տօմիւրծուկ — Ճրտից փայտ կտրուել հիւանդանալ.  
Փէտայէցի — Հսարեցի.  
Փնթի — Կեղտուս, անհոգ.  
Փորսուխ — Կարծ ոսներով, հաստ թաթերով գազան  
մի է փոքր, գետինը կը փորէ, մէջը կը մտնէ.  
Փոխմուն — Փոխուած.  
Փօշովնաւ — Զղացաւ.  
Քերթեր — Յօդուածներ.  
Քնչէ — Թաղիր նաեւ հովիները թաղիքնայ մերար-  
կու կառնեն ուսերուն վերայ.  
Քիմին — Որը.  
Քուլին = Ամբողջն եւս.  
Քոլոզ - Թաղիքնայ զլխարկ.  
Քօքուն — Արմատէն.  
Օլ տաւ — Ման եկաւ, որոնեց.  
Օխչար — Այժ.  
Օր — Օր կըզբուի, երբ որ յարաբերականն է.  
օ կը դրուի երբ զի շաղկապն է.  
Օրթանմայ — Միջնէկ.  
Օրթլլինէն — Մեջտեղէն.

11949

2013

